Գնամ, տեսնես իմ նանը ինչ բանի է,
Աեջքը բարակ, անունը՝ Նապանի է,
Բալքի միտքը ընկնեմ, գսոդտու գալու ա,
Ման գյամ, ման գյամ Սև սանափյուր վարումը,
Մեկ էլ ման գյամ Քոշաքարի սարումը:

ՁԻՆՎՈՐԻ ԵՐԳԵՐ

334. Քույրիկ ջան, քույրիկ, էդ ո՞ւր ես գնում,
Աման, աման, եղբայր ջան, Սև ծովն եմ գնում,
Քույրիկ ջան, քույրիկ, Սև ծովում ի՞նչ կա,
Աման, քեզ պատմեմ, եղբայր ջան, կարմիր վարդս կա,
Քույրիկ ջան, քույրիկ, վարդդ կկորչի,
Աման, աման, եղբայր ջան, լեկուդ պասպանչվի:

335. Կերչ քաղաքի գլխի լալեն,
Թաղեմ շուն Հիտլերի բալեն,
Մորս ու քրոջս թողեց լալեն,
Խաբեք մորս, վիրավոր եմ:

Հենց որ մտա Կերչի հողը,
Ջանըս ընկավ մահվան դողը,
Ծեկ քյանքուլս դրին հողը,
Խաբեք մորս, վիրավոր եմ:

Մայրս, քույրս չեռքը ծոցին,
Փոքր բալես օրորոցին,
Միրած յարս կրակ բոցին,
Խաբեք մորս, վիրավոր եմ:

Մեծ եղբայր ջան, մեռնում եմ ես,
Ընտանիքս հանչնում եմ քեզ,
Ընաանիքիս լավ կպահես,
Ուպածները չխնայես:

336. Հոքոսաոսին քոմին կապաս,
Տարան լյրին Գյումրին ու Ղարս,
Տներ թողին, աղջիկ ու հարս,
Վերան դառնաս, Մամա խաթուն,
Ցարալու եմ, տարան Քաթում:

Հասան Ղալեն քար ու քոա,
Գյուլլեն մեջը կըֆոֆոա,
Ձեռքիս յարեն կըմռմոա,
Վերան դառնաս, Հասան Ղալա,
Ճասին թողիր, եթիմ բալա:

Դիրքը մտա վրես բաց էր,
Խշտիկ կարկողս անաստված էր,
Վերան դառնաս, Մամա խաթուն,
Ցարալու եմ, տարան Քաթում:

ՈՐԲԻ ԵՐԳ

337. Ամերիկու ճամբեն երկար ու դուլ է,
Ամերիկացին կայնած, մամա, որբերը կուլե,
Տեղս քաղաք է, ծովի արանք է,
Երթալ ու գալը, մամա ջան, կրակ է:

Մտա թունելը, չոքերս դողաց,
Դուս գալու ժամանակ, մամա, աչքերս շողաց,
Տեղս քաղաք է, ծովը արանք է,
Երթալ ու գալը, մամա ջան, կուլում կրակ է:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ

338. Երբ որ կործանվեց
Հայոց մեծն Անին,
Հայերը մնացին
Օտարի չեռքին:

Արմենյան հող է,
Երկիրը ծով է,
Սասունը, Մուշ, Վան,
Հայկական հող է:

Կորել է հովիվը,
Փովել է հոաը,
Թուրքիային է մնացել
Հայոց մեր արոտը:

Արմենյան հող է,
Երկիրը ծով է,
Սասունը, Մուշ ու Վան
Հայկական հող է:

Եղիր դու այնտեղ,
Որտեղ մի հայ կա,
Գուրգուրիր նրան,
Որ Հայաստան գա: